«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ

ՏՆՕՐԵՆ _____Ա. ԱԼԻԽԱՆՅԱՆ

«-----» ---------- 2022թ.

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Փիլիսոփայություն 3
2. Նպատակներ և սկզբունքներ 3
   2.1. Գնահատման նպատակները 3
   2.2. Գնահատման սկզբունքները 3
3. Գնահատման փուլերը 4
4. Ընդհանուր դրույթներ 4
5. Գնահատման ձևերը 5
   5.1. Ուսուցանող(ձևավորող) գնահատում 5
   5.2. Ամփոփիչ Գնահատում 6
   5.3. Ինքնուրույն յուրացման առաջադրանք 8
   5.4. Խրախուսական գնահատում 8
   5.5. Քննություններ 8
   5.6. Վերահանձնում 9
   5.7. Գնահատականի փոփոխում 9
6. Ստանդարտացում 10
   6.1. Ստանդարտացման նպատակները 10
   6.2. Ստանդարտացման մասնակիցները 10
   6.3. Ստանդարտացման հաճախականությունը 10
   6.4. Ստանդարտացման ընթացակարգը 10
7. Գնահատում և արդյունքների ամփոփում 11
   7.1. Ընդհանուր գնահատման համակարգ 11
   7.2. Կիսամյակային միավոր 11
   7.3. Տարեկան թվանշանը 12
   7.4. Միջնակարգ կրթության ատեստատի գնահատականներ 12
   7.5. Միջին որակական գնահատական 12
   7.6. Տարեկան ռեյտինգ 12

8. Հաշվետվություն 13

9. Վեջնաժամկետների պահպանումը 13

10. Առնչություններ կրթական բաղադրությունների միջև 13

10.1. Լեզվի բաղադրություն 13

10.2. Ներառման բաղադրություն 13

10.3. Անհատական ուսուցում 14

10.4. Ակադեմիական ազնվության բաղադրություն 14

11. Դերերը և պարտականությունները 14

11.1. Դպրոցի տնօրենություն 15

11.2. Ուսուցիչ 15

11.3. Ուսանող 15

11.4. Ծնող 16

12. Հղումներ 16

13. Հավելվածներ 17

Հավելված **1.** Ավագ դպրոցի առարկայական չափանիշները 17

Հավելված **2.** Թվանշանային միավորների համակարգը 18

Հավելված **3.** ՄԲԴԾ և ԱԴ հեղինակային ծրագրերում սովորողների գնահատման սանդղակ 19

Հավելված **4.** Ռեյտինգների հաշվարկման կարգ 22

Հավելված **5.** Գնահատման ստանդարտացման ձևանմուշ 23

Հավելված **6.** Միջին որակական գնահատականի հաշվարկում 24

1. Փիլիսոփայություն

1.1. Գնահատումը ուսուցման և ուսումնառության ողջ գործընթացի կարևորագույն բաղադրիչներից է: Գնահատման հիմնական նպատակն է խթանել ուսուցման և ուսումնառության գործընթացը՝ հիմք դառնալով գիտելիք, հմտություններ և կարողություններ ձեռք բերելու, սեփական փորձը ընկերներին հաղորդելու հարցում, ինչպես նաև ապահովելով դրա շարունակական զարգացումը: Գնահատումը հնարավորություն է ընձեռում պլանավորել, իրականացնել, վերլուծել և ուղղորդել ուսուցման և ուսումնառության գործընթացը:

1.2. Գնահատումը ենթադրում է տարատեսակ և բազմազան այնպիսի մեթոդների կիրառություն, որոնք ուսուցչին և ուսանողին հնարավորություն են տալիս հետազոտելու, արժևորելու ձեռքբերումները, գրանցելու բացթողումները:

1.3. Հիմնավորվածությունը, թափանցիկությունը, վստահելիությունը և ստանդարտացումը չափորոշիչային գնահատման հիմնական բնորոշիչներն են: Այս գործընթացն օգնում է ամեն առարկայի նպատակներին ու չափանիշներին համապատասխան բացահայտելու յուրաքանչյուր ուսանողի առաջընթացի մակարդակը:

2. Նպատակներ և սկզբունքներ

2.1. Գնահատման նպատակները

2.1.1. ուսանողների ակադեմիական առաջընթացի խթանում՝ նախօրոք մշակված և ուսանողներին ներկայացված գնահատման չափանիշների միջոցով.

2.1.2. կրթության նկատմամբ դրական վերաբերմունքի խթանում, ինչպես նաև ցկյանս կրթվելու կենսակերպի ձևավորում.

2.1.3. ուսուցիչների և ուսանողների միջև անդրադարձի և հետադարձ կապի ապահովում.

2.1.4. անդրադարձի և վերլուծության կիրառում՝ որպես ուսուցման և ուսումնառության անբաժանելի և կարևորագույն բաղադրիչներ.

2.1.5. ուսանողների ձեռքբերումների մակարդակի արձանագրում.

2.1.6. ուսումնառությունը շարունակելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների առկայության ապահովում:

2.2. Գնահատման սկզբունքները

Գնահատումը սատարում է կրթակարգի ուսումնական և փիլիսոփայական նպատակների իրագործմանը՝ ուսումնառության ընթացքում արդյունավետ համագործակցություն ապահովելու և ուսանողներին ոգևորելու միջոցով:

2.2.1. Գնահատման արդյունքները հուսալի են և համապատասխանում են չափորոշչային պահանջներին:

2.2.2. Գնահատումը կարևորում է ոչ միայն հիմնական ճանաչողական հմտությունների, այլ նաև խոր գիտելիքների ձեռքբերումը և մտածական հմտությունների զարգացումը:

2.2.3. Յուրաքանչյուր առարկայի գնահատումը ներառում է չափորոշիչների հիման վրա մշակված և առարկայի բոլոր նպատակների իրականացումն ապահովող առաջադրանքներ և գործիքակազմ:

2.2.4. Գնահատումն ապահովում է արձանագրված արդյունքների հիմնավորվածությունը, թափանցիկությունը, վստահելիությունը և անաչառությունը:

2.2.5. Ուսուցիչներն իրավունք ունեն ազատորեն ընտրելու գնահատման ռազմավարությունները՝ կիրառելով անհատական կամ խմբային գնահատման տեսակները:

3. Գնահատման փուլերը

Գնահատման ողջ գործընթացը բաժանվում է երեք փոխկապակցված փուլերի.

Առաջին փուլում (գնահատում) բացահայտվում է, թե ինչ գիտեն և ինչ են սովորել ուսանողները:

Երկրորդ փուլում (գրանցում) հավաքվում, վերլուծվում և ամփոփվում են տվյալները:

Երրորդ փուլում (հաշվետվություն) ներկայացվում է տեղեկությունը կամ գնահատման արդյունքները:

4. Ընդհանուր դրույթներ

4.1. Ճեմարանի ավագ դպրոցում ուսումնական տարին բաժանվում է երկու կիսամյակների:

4.2. Ճեմարանի ԱԴ հեղինակային ծրագրում կիրառվում են ՀՀ պետական և առարկայական չափորոշիչների, ինչպես նաև ճեմարանի հեղինակային կրթական ծրագրի պահանջները:

4.3. Գնահատման ձևաչափը, անցկացման ժամկետները ու չափանիշները հրապարակվում են գնահատումից առաջ՝ ապահովելու գնահատման թափանցիկության սկզբունքը:

4.4. Գնահատման ընթացքում, առաջնորդվելով յուրաքանչյուր առարկայի առանձնահատկություններով, կիրառվում են բազմաբնույթ առաջադրանքներ, վարժություններ՝ ուսանողների ձեռք բերած գիտելիքների և կարողությունների ողջ ծավալը բացահայտելու համար:

4.5. Ճեմարանում կիրառվում են գնահատման արտաքին և ներքին ձևերը, ամփոփիչ(միավորային) և ուսուցանող(ձևավորող) տեսակները (Տես կետ 5 և 6):

4.6. Արտաքին գնահատումն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍՆ-ի և ԳԹԿ-ի առաջադրած գրավոր առաջադրանքների և բուհերի ընդունելության քննությունների միջոցով:

4.7. Ճեմարանում առաջնորդվում են ներքին գնահատման արդյունքներով:

4.8. Յուրաքանչյուր առարկայից ձեռք բերած գիտելիքները, կարողությունները ամփոփվում են կիսամյակային և տարեկան գնահատումով, որն արտահայտվում է որոշակի թվանշանային միավորով /տե՛ս Հավելված 2/:

4.9. Կիսամյակային և տարեկան գնահատականների հիման վրա հաշվարկվում է յուրաքանչյուր ուսանողի ռեյտինգը/տես Հավելված 4/:

5. Գնահատման ձևերը

5.1. Ձևավորող գնահատում

5.1.1. Ձևավորող գնահատումը տեղեկության, որոշակի փաստերի, տվյալների հավաքագրման, վերլուծության, մեկնաբանության և կիրառման գործընթաց է, որը ուսանողին օգնում է բարելավելու իր ուսումնառությունը և հասնելու լավագույն արդյունքի, իսկ դասավանդողին՝ ճշգրտելու դասավանդման ընթացքում կիրառվող ռազմավարությունների և մեթոդների նպատակահարմարությունն ու արդյունավետությունը:

5.1.2. Ձևավորող գնահատումը.

5.1.2.1. նպաստում է արդյունավետ հետադարձ կապ ապահովելուն, քանի որ հնարավորություն է տալիս ուսանողներին իրազեկելու ուսումնառության ձեռքբերումների, արդյունքների և բացթողումների մասին.

5.1.2.2. խթանում է ուսանողների ուսումնական դրդապատճառները (մոտիվացիան), բարելավում է գիտելիքների ձեռքբերման, կարողությունների դրսևորման գործընթացը, նպաստում ինքնագիտակցության և ինքնակազմակերպման զարգացմանը.

5.1.2.3. իրականացվում է յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրության ընթացքում՝ ապահովելով նյութի լիարժեք յուրացումը, համապատասխան հմտությունների ու կարողությունների զարգացումը:

5.1.3. Ձևավորող գնահատումն իրականացվում է ամփոփիչ գնահատումից առաջ առնվազն մեկ անգամ և գնահատվում է ոչ միայն բառային բնութագրիչներով՝ ըստ տվյալ առաջադրանքի համար նախապես սահմանված չափանիշների, այլև թվանշանային միավորով (1-10):

5.1.4. Ձևավորող գնահատման սանդղակները ու չափանիշները կարող են մշակվել նաև ուսանողների հետ համատեղ:

5.1.5. Ուսումնառության ընթացքում ձևավորող գնահատումն իրականացնելու նպատակով կիրառվում են բազմաբնույթ առաջադրանքներ (թե՛ բանավոր, թե՛ գրավոր):

5.1.6. Ձևավորող աշխատանքների ձևաչափը, հաճախականությունը, քանակը և տեսակը որոշվում են տարիքային պատասխանատուի, հաստատում ամբիոնի դեկավարի կողմից:

5.1.7. Ճեմարանի ավագ դպրոցի հեղինակային կրթական ծրագրով առարկայական շրջանակում նախատեսվող և կազմակերպվող հասարակական գործունեությունը, հանրային ծառայության նախագծերը, մոդուլների ընթացքում կատարված առաջադրանքները, բանավոր հարցումները ևս կարող են համարվել ձևավորող աշխատանք և գնահատվել նախապես կազմված գործողությունների պլանի և չափանիշների հիման վրա:

5.1.8. Կիսամյակի ընթացքում ձևավորող գնահատականների թվաբանական միջինը կազմում է կիսամյակային գնահատականի 30%-ը:

5.1.9. Ձևավորող գնահատմանը հարգելի պատճառով չմասնակցելու դեպքում ուսանողը այն լրացնում է նույն ձևաչափով ամբիոնի հերթապահության ժամերին՝ ոչ ուշ, քան մինչև ամփոփիչ գնահատումը:

5.1.10. Ձևավորող աշխատանքի լրացման պատասխանատվությունը կրում են դասավանդող և ամբիոնի հերթապահ ուսուցիչները: Ձևավորող աշխատանքի գրավոր ձևաչափի դեպքում դասավանդող ուսուցիչը աշխատանքը փոխանցում է ամբիոնի հերթապահ ուսուցչին և էլփոստով ծանուցում է ուսանողին գրավոր աշխատանքը լրացնելու օրվա մասին: Բանավոր հարցման դեպքում հարցումը կազմակերպում է դասավանդող ուսուցիչը:

5.1.11. Անհարգելի պատճառով ուսուցանող գնահատմանը չմասնակցած սանը գնահատվում է հվազագույն 1 (մեկ) միավորով:

5.2. Ամփոփիչ գնահատում

5.2.1. Ամփոփիչ գնահատման նպատակը ուսումնասիրվող միավորի (թեմայի, բաժնի և այլն) ավարտից հետո ուսանողների գիտելիքների և կարողությունների մակարդակի որոշումն է:

5.2.2. Ամփոփիչ աշխատանքների, կիսամյակային ստուգումների ու քննությունների արդյունքներն ամրագրվում են թվանշանային միավորով և համարվում են ամփոփիչ (արձանագրող) գնահատականներ:

5.2.3. Ամփոփիչ աշխատանքների առաջադրանքները պետք է հիմնված լինեն յուրացման ու ձևավորող աշխատանքների միջոցով զարգացված հմտությունների և առարկայական ծրագրի շրջանակներում ձեռք բերած գիտելիքի բովանդակության վրա:

5.2.4. Ուսանողի ձեռք բերած գիտելիքի ու կարողությունների գնահատման համար ուսուցիչը պետք է նախապես կազմի առաջադրանքներ՝ գնահատման հստակ չափանիշներով և հետևի դրանց կիրառմանը:

5.2.5. Ամեն կիսամյակի ընթացքում կիրառվում է առնվազն երկու ամփոփիչ գնահատում:

5.2.6. Ամփոփիչ աշխատանքների թվաբանական միջինը կազմում է կիսամյակային գնահատականի 70%-ը:

5.2.7. Ամփոփիչ գնահատման իրականացման ժամկետները նախանշվում են ամփոփիչ պլանների և դպրոցի գնահատման օրացույցում:

5.2.8. Մինչև ամփոփիչ գնահատման աշխատանքի անցկացումը ուսուցիչը պետք է ուսանողներին տեղեկացնի առաջադրանքների ձևաչափի, հատկացվող ժամանակի, չափանիշների մասին, մանրամասն ներկայացնի գնահատման սանդղակները և քննարկի ակնկալվող արդյունքները: Գնահատման սանդղակներ մշակելիս ուսուցիչը և ուսանողները ազատ են չափանիշների ձևակերպման հարցում, սակայն դրանք պետք է լինեն հստակ, չափելի, վստահելի և հրապարակվեն նախապես:

5.2.9. Ամփոփիչ գնահատման աշխատանքների արդյունքները ուսուցիչը պետք է քննարկի մեկ շաբաթվա ընթացքում և թվանշանը անցկացման օրվա ամսաթվով գրանցի դասամատյանում:

5.2.10. Ամփոփիչ գնահատման աշխատանքը հիվանդության կամ այլ հարգելի պատճառով չկատարած ուսանողը այն լրացնում է ամփոփիչ աշխատանքների լրացման համար սահմանված որևէ օր՝ մինչև հաջորդ ամփոփիչ աշխատանքը՝ համաձայն բաց թողնված ամփոփիչ աշխատանքների լրացման կարգի:

5.2.11. Բաց թողած ամփոփիչ աշխատանքների տարբերակները կազմում է դասավանդող ուսուցիչը՝ ուսումնական մասի տրամադրած տվյալների համաձայն:

5.2.12. Անհարգելի բացակայության կամ նախագծային աշխատանքների վերջնաժամկետը չպահպանելու դեպքում սանը արժանանում է հվազագույն 1(մեկ) գնահատականի, սակայն դրությունը մեղմացնող հանգամանքների առկայության դեպքում (ընտանեկան, հոգեբանական և այլն) նշանակվում է առանձին հանդիպում, որին ներկա են լինում տնօրենը, ՄԲ կամ հեղինակային ծրագրի համակարգողը, համապատասխան առարկայի ուսուցիչը, ինչպես նաև ուսանողի ծնողը կամ խնամակալը, խմբի մանկավարժը և հոգեբանը: Հանդիպումից հետո տնօրենի որոշմամբ սանը կարող է լրացնել բաց թողած գրավոր աշխատանքը:

5.2.13. Յուրաքանչյուր կիսամյակի վերջում իրականացվում են կիսամյակային ամփոփիչ աշխատանքներ խորացված առարկաներից:

5.2.14. Կիսամյակային ամփոփիչ աշխատանքներն ունեն ամփոփիչ աշխատանքի կշիռ:

5.2.15. Ակադեմիական ազնվության խախտման դեպքում (հուշարարություն, գրագողություն, արտագրություն ընկերոջից կամ այլ աղբյուրներից) ուսանողը զրկվում է աշխատանքը շարունակելու իրավունքից և ստանում նվազագույն 1(մեկ) գնահատական:

5.2.16. Սույն գնահատման կարգով չնախատեսված դեպքերը կարգավորվում են ճեմարանի համապատասխան նորմատիվային փաստաթղթերով:

5.3. Ինքնուրույն յուրացման առաջադրանք

5.3.1. Որպես կանոն՝ ուսանողներին տրվում են ինքնուրույն յուրացման առաջադրանքներ՝ դասարանում ուսուցանվող թեման ամրապնդելու, դրանց միջոցով զարգացվող հմտությունները բարելավելու նպատակով, ինչպես նաև դրանք կատարելու համապատասխան ժամանակ: Չկատարելու դեպքում ուսանողը նախազգուշացվում է երեք անգամ, որից հետո նրա ծնողին տեղեկացնում են անկանոն և ոչ հետևողական աշխատանքի մասին:

5.3.2. Երեք և ավելի անգամ յուրացման առաջադրանքը չկատարելու դեպքում սանը ներկայացնում է բացատրագիր-ինքնավերլուծություն յուրացման առաջադրանքը չկատարելու պատճառների, ժամանակի կառավարման և ինքնակառավարման հմտությունները բարելավելու ուղղությամբ նախատեսվող քայլերի մասին:

5.4. Խրախուսական գնահատում

5.4.1. Հանրապետական կամ միջազգային օլիմպիադաների և մրցույթների մասնակից ուսանողների գնահատումն իրականացվում է առանձին կարգով՝ մանկավարժական առաջնորդության կայացրած որոշման համաձայն:

5.4.2. Հանրապետական և միջազգային օլիմպիադաների I, II, III տեղեր գրված սաներն անկախ ռեյտինգից հաջորդող կիսամյակում կրթությունը շարունակում են պետական համաֆինանսավորմամբ տեղերում:

5.5. Քննություն

5.5.1. Տարեվերջյան քննություններ

5.5.1.1. Առաջին ուսումնական տարվա վերջում ուսանողները հանձնում են տարեվերջյան քննություններ իրենց ընտրած խորացված առարկաներից՝ համաձայն տվյալ ուսումնական տարվա համար սահմանված ժամկետացանկի: Տարեվերջյան քննությունները միտված են ստուգելու ամբողջ տարվա ընթացքում տվյալ առարկայի շրջանակում յուրացված նյութի իմացության մակարդակը:

5.5.1.2. Տարեվերջյան քննությունը նպատակ ունի չափելու ուսանողների՝ ողջ տարվա ընթացքում ուսուցանվող դասընթացների թեմաների ընդհանրական իմացությունը:

5.5.2. Պետական ավարտական քննություններ

5.5.2.1. 12-րդ դասարանի ուսանողները պետական ավարտական քննություններ կարող են հանձնել ընթացիկ ուսումնական տարվա դեկտեմբեր կամ հունիս ամիսներին՝ համաձայն ԿԳՄՍ նախարարության ժամկետացանկի:

5.5.2.2. Դեկտեմբերյան պետական ավարտական քննությունների վերաբերյալ ԿԳՄՍ նախարարության ծանուցումից հետո ուսանողների շրջանում անցկացվում է հարցում, որից հետո 10-օրյա ժամկետում ամբիոնների կողմից կարող է իրականացվել թեստավորում՝ ուսանողների մասնակցությունը երաշխավորելու նպատակով:

5.5.2.3. Պետական ավարտական քննությունների գնահատումը և ամփոփումը կատարվում են հանրակրթական դպրոցների համար սահմանված կարգով:

5.6. Վերահանձնում

5.6.1. Կիսամյակային մինչև 3 անբավարար գնահատական ունենալու դեպքում ուսանողն ունի երկու վերահանձնման հնարավորություն (վերահանձնումների ժամանակացույցը հաստատում է ավագ դպրոցի հեղինակային ծրագրի համակարգողը): Առաջին վերահանձնման դրական միավորը միջինացվում է կիսամյակային թվանշանի հետ: Երկրորդ վերահանձնման դրական թվանշանին տրվում է կիսամյակային թվանշանի կարգավիճակ:

5.6.2. Տարեվերջյան քննության անբավարար գնահատականի դեպքում սանն ունի 2 վերահանձնման հնարավորություն: Առաջին վերահանձնման դրական թվանշանը դիտարկվում է որպես քննական արդյունք և հաշվարկվում է համաձայն 7.3.2. կետի: Երկրորդ վերահանձնման թվանշանը տվյալ առարկայի տարեկան վերջնական արդյունքն է:

5.7. Գնահատականի փոփոխում

5.7.1. Ուսանողին հնարավորություն է տրվում վերանայելու և փոփոխելու իր տարեվերջյան գնահատականը:

5.7.2. Գնահատականի փոփոխության հայցն անհրաժեշտ է ներկայացնել մինչև ընթացիկ ակադեմիական տարվա հունիսի 22ը՝ ԱԴ ՀԾ համակարգողին ուղղված դիմումով:

5.7.3. Տարեվերջյան քննությունը ձախողած ուսանողներն իրավունք չունեն դիմելու գնահատականի փոփոխության համար:

5.7.4. Տարեկան վերջնական գնահատականի բարձրացման համար ուսանողը հանձնում է տվյալ ուսումնական տարվա ընթացքում ուսումնասիրված դասընթացի բովանդակությանը համապատասխան ակադեմիական գիտելիքի և հմտությունների ստուգումն ապահովող քննություն:

5.7.5. Եթե վերանայման արդյունքում ուսանողի գնահատականը ավելի ցածր է տարեվերջյան գնահատականից, վերջնական գնահատականը որոշում է ուսուցիչը:

6. Ստանդարտացում

Բոլոր տարիքային խմբերում, որտեղ դասավանդում են մեկից ավելի ուսուցիչներ, պարտադիր է կազմակերպել ամփոփիչ աշխատանքների բովանդակության, չափանիշների, սանդղակների և արդյունքների դիտարկման ներքին ստանդարտացման գործընթաց՝ ապահովելով դրանց համանման ընկալումն ու կիրառումը բոլոր դասարաններում:

6.1. Ստանդարտացման նպատակները

6.1.1. Ապահովել վստահելի/հուսալի, վավերական և թափանցիկ գնահատում:
6.1.2. Ապահովել/երաշխավորել ընդհանուր ըմբռնումը, մեկնաբանումը և գնահատման չափանիշի կիրառումը:
6.1.3. Ապահովել միասնական մոտեցում ուսումնական և գնահատման գործընթացում:
6.1.4. Մշտադիտարկել գնահատման առաջադրանքները, գործիքները, սանդղակը, մեթոդները և դրանց արդյունավետությունը:

6.2. Ստանդարտացման մասնակիցները

6.2.1. ուսուցիչները
6.2.2. ուսանողները, ծնողները, տնօրենը, անհրաժեշտության դեպքում նաև համակարգողները:

6.3. Ստանդարտացման հաճախականությունը

6.3.1. Ստանդարտացումը յուրաքանչյուր կիսամյակում իրականացվում է 2-3 անգամ և երբ զգացվում է դրա անհրաժեշտությունը:
6.3.2. Ստանդարտացում իրականացվում է նաև ուսանողի կամ ծնողի դիմումի համաձայն:

6.4. Ստանդարտացման ընթացակարգը

6.4.1. Առարկայական խմբերում և նույն առարկաների տիրույթում ստանդարտացման գործընթացը սկսվում է հետազոտական միավորի պլանավորման հետ մեկտեղ. բոլոր միավորները ներառում են ձևավորող և ամփոփիչ առաջադրանքներ՝ գնահատման համապատասխան գործիքներով և ռազմավարությամբ, ինչպես նաև միջառարկայական գնահատման պլանավորումը: Գնահատման ժամանակաշրջանում վերոնշյալ ուսուցիչները գնահատում են պատահական ընտրված 4 կամ 5 աշխատանքներ, այնուհետև ամփոփում են արդյունքները, քննարկում և անհրաժեշտության դեպքում վերափոխում գնահատման սահմանները: Ստանդարտացման գործընթացն ավարտելուց հետո ստանդարտացման ձևանմուշը լրացվում և ստորագրվում է: (Հավելված 6)

7. Գնահատում և արդյունքների ամփոփում

7.1. Ընդհանուր գնահատման համակարգ

7.1.1. Ճեմարանի ավագ դպրոցի հեղինակային ծրագրի ուսանողների համար գործում է 1 (նվազագույն) – 10 (առավելագույն) թվանշանային համակարգ (տե՛ս Հավելված 2):

7.1.2. 1–ից մինչև 4 միավորը համարվում է անբավարար:

7.1.3. Ուսանողը ստանում է 1 (մեկ) միավոր ակադեմիական անազնվություն դրսևորելու դեպքում (տես՝ Ակադեմիական ազնվության բաղաքականություն փաստաթուղթը):

7.1.4. Սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում ուսանողի առաջադրանքը գնահատվում է 1 (մեկ) միավոր:

7.1.5. Ամփոփիչ աշխատանքից անհարգելի բացակայության դեպքում գործում է 5.2.12 կետի դրույթը:

7.2. Կիսամյակային միավոր

7.2.1. Կիսամյակային միավորը գոյանում է ամփոփիչ աշխատանքների միավորների միջին թվաբանականից (տե՛ս կետ 5.1.8. 7 5.2.6.):

7.2.2. Կիսամյակային գնահատականը հաշվարկելիս կլորացումը կատարվում է միայն վերջում, մաթեմատիկական սկզբունքով, ստորակետից հետո մինչև տասնորդական նիշը:

7.2.3. Կիսամյակի արդյունքների ամփոփումից հետո 3 և ավելի բացասական միջին թվանշաններ ունեցող ուսանողների ծնողների հետ կնքված պայմանագիրը դադարեցվում է, և ուսանողը տեղափոխվում է այլ դպրոց:

7.3. Տարեկան թվանշանը

7.3.1. Տարեկան թվանշանը հաշվարկվում է տարեկան միջին գնահատականից (երկու կիսամյակների միջին թվաբանական):

7.3.2. Խորացված առարկաների տարեկան թվանշանը հաշվարկվում է առաջին, երկրորդ կիսամյակների և բնական միավորի միջին գնահատականից (երկու կիսամյակների և բնության միջին թվաբանական):

7.3.3. Տարեկան վերջնարդյունքով անբավարար գնահատական ունենալու դեպքում ուսանողը խորացված ուսուցմամբ խմբից տեղափոխվում է հենքային ուսուցմամբ խումբ:

7.3.4. Ուսանողներին հնարավորություն է տրվում դիմել տարեվերջյան գնահատականի փոփոխության համար (տես 5.8.5. կետը):

7.3.5. Եթե ուսանողը ճեմարանում ուսումնառությունը սկսել է երկրորդ կիսամյակից, ապա երկրորդ կիսամյակի գնահատականը ընդունվում է որպես տարեկան գնահատական:

7.4. Միջնակարգ կրթության ատեստատի գնահատականներ

7.4.1. Միջնակարգ կրթության ատեստատի գնահատականներն ամփոփվում են՝ հաշվարկելով 11, 12-րդ դասարանների ավարտական գնահատականների միջին թվաբանականը:

7.5. Միջին որակական գնահատական

7.5.1. Ամենամյա տարեկան գնահատականների ամփոփագիրը, որը ցույց է տալիս ուսանողների ակադեմիական առաջադիմությունը, ներառում է յուրաքանչյուր կիսամյակի համար ստացված գնահատականները և միջին որակական գնահատականը (GPA):

7.5.2. ԱԴ հեղինակային ծրագրի ուսանողների միջին որակական գնահատականի (GPA) հաշվարկը կատարվում է հարաբերական աճի սկզբունքով՝ հատուկ գործակիցների կիրառմամբ (տե՛ս Հավելված 6):

7.6. Տարեկան ռեյտինգ

7.6.1. Ուսանողի տարեկան ռեյտինգը հաշվարկվում է՝ ըստ համապատասխան կարգի (տե՛ս Հավելված 4):

8. Հաշվետվություն

8.1. Ուսանողները և ծնողները գնահատման վերաբերյալ տեղեկատվություն ստանում են e-Buh կայքի միջոցով:

8.2. Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ուսանողներին և ծնողներին տրամադրվում է հաշվետվության թերթիկ, որում ամփոփ ներկայացված են բոլոր առարկաների վերաբերյալ ուսանողի ձեռքբերումները՝ թվանշանային և բառային բնութագրիչներով:

8.3. Ավարտական դասարանի ուսանողներին տրամադրվում է 12-րդ դասարանի ամփոփ հաշվետվություն (տրանսկրիպտ):

9. Վերջնաժամկետների պահպանումը

Գնահատման առաջադրանքները ու աշխատանքները ներկայացնելիս վերջնաժամկետները չպահպանելու դեպքում ուսանողները պարտավորվում են կրել ամբողջ պատասխանատվությունը՝ այն գիտակցությամբ, որ նման դեպքերը բացասաբար կարող են ազդել տվյալ առարկայից ձեռք բերած գիտելիքների և կարողությունների գնահատման վերջնական արդյունքի վրա: Վերջնաժամկետները շարունակաբար չպահպանելու դեպքերը դիտարկվում են որպես ակադեմիական անթույլատրելի վարքագծի դրսևորում, որը

տնօրենի, ծրագրի համակարգողի և մանկավարժի և/կամ ուսուցչի համատեղ քննարկման արդյունքում կայացրած որոշման հիման վրա կարող է դիտարկվել որպես կարգապահական խախտում:

10. Առնչություններ կրթական բաղադրիչների միջև

10.1. Լեզվի բաղադրիչ

10.1.1. Եթե ուսանողի մայրենի լեզուն հայերենը չէ, նա ներառվում է հայագիտության դասընթացում, որտեղ կիրառելի է միայն կշիռ չունեցող գնահատումը:

10.2. Ներառական կրթության բաղադրիչ

10.2.1. Եթե ուսանողը բնութագրվում է ճեմարանի ներառական կրթության բաղադրիչներից որևէ մեկով, ուսուցիչները, համագործակցելով ԿԱՊ համակարգողի, ինչպես նաև հոգեբանական ծառայության հետ, մշակում են գործին վերաբերող հատուկ փաստաթուղթ:

10.3. Անհատական ուսուցում

10.3.1. Եթե ուսանողի մայրենի լեզուն հայերենը չէ, ապա նրա համար կազմվում է անհատական ծրագիր, գնահատման առաջադրանքը, սանդղակը (ռուբրիկ) կազմվում են ուսանողի մայրենի լեզվով (հիմք՝ «Լեզվի բաղադրիչ» փաստաթուղթը):

10.3.2. Եթե ուսանողն ընդունվել է ճեմարան և ունի մեկ (կամ մի քանի) առարկայից գիտելիքների և դրանք կիրառելու կարողության ոչ բավարար դրսևորումներ, ապա նրա գնահատումը իրականացնելու համար մշակվում է անհատական ծրագիր՝ թույլատրելով գնահատումը կատարել համեմատական աճի սկզբունքով: Ուսանողի անհատական ծրագիրը հաստատում է տվյալ առարկայական խմբի ղեկավարը և ծրագրի համակարգողը:

10.4. Ակադեմիական ազնվության բաղադրիչ

10.4.1. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ուսանողները տեղեկանում են Ակադեմիական ազնվության բաղադրիչի բովանդակության մասին:

10.4.2. Արտագրության, ծածկագրերի կամ այլ աղբյուրների օգտագործման, հուշարարության և ոչ ինքնուրույն աշխատանքի ցանկացած փորձ անհարիր է ճեմարանում ուսանողի նկարագրին, ուսումնական նպատակներին, ակադեմիական ազնվության սկզբունքներին և համարվում է անթույլատրելի արարք:

10.4.3. Եթե ուսուցիչն ունի կասկածներ առ այն, որ ուսանողը դրսևորում է ակադեմիական անազնիվ վարք, ապա երևույթի մասին ներկայացնում է մանրամասն զեկուցագիր, որի հիման վրա ակադեմիական անազնվության դրսևորումները քննարկվում են կարգապահական խորհրդում՝ ճեմարանի սահմանած կարգի համապատասխան (հիմք՝ «Ակադեմիական ազնվության բաղադրիչ» փաստաթուղթը):

10.4.4. Ակադեմիական անազնվության դրսևորումները ֆիքսվում են նաև կարգապահական խորհրդում՝ ճեմարանի սահմանած կարգի համապատասխան (հիմք՝ «Ակադեմիական ազնվության խաղաֆականություն» փաստաթուղթը):

10.4.5. Ակադեմիական ազնվության սկզբունքներին անվերապահորեն պետք է հետևել ուսումնական ողջ գործընթացի ժամանակ:

11. Դերերը և պարտականությունները

Դպրոցական ողջ համայնքը պատասխանատու է գնահատման խաղաֆականության իրականացման համար:

11.1. Դպրոցի տնօրենություն

11.1.1. Դպրոցի ղեկավարությունը պատասխանատու է գնահատման խաղաֆականության ձևավորման, դրա վերահսկողության և տարեկան վերանայման համար:

11.1.2. Դպրոցի ղեկավարությունը պատասխանատու է ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման սեմինարների կազմակերպման համար:

11.2. Ուսուցիչ

Ուսուցիչները պարտավոր են՝

11.2.1. գնահատումը համարել ուսուցման և ուսումնառության պլանավորման ամենաէական բաղադրիչը.

11.2.2. շարունակաբար ուսումնասիրել գնահատման խաղաֆականության փաստաթուղթը և դասընթացների բովանդակությունը մշակել դրան համապատասխան.

11.2.3. իրականացնել առարկայի չափանիշներին վերաբերող գնահատումներ, որոնք համապատասխանում են գնահատման խաղաֆականությանը և պետական չափորոշիչներին.

11.2.4. մշակել գնահատման սանդղակներ և այլ փաստաթղթեր.

11.2.5. ներգրավել ուսանողներին գնահատման խաղաֆականության փաստաթղթի վերանայման գործընթացին.

11.2.6. մասնակցել գնահատման խաղաֆականության փաստաթղթի վերանայման գործընթացին.

11.2.7. ուսանողներին տեղեկացնել գնահատման չափանիշների առանձահատկությունների մասին.

11.2.8. աջակցել ուսանողների ինքնագնահատմանը, ինքնավերլուծությանը, ինքնակազմակերպման հմտությունների զարգացմանն ու արտահայտմանը

11.2.9. ուսանողներին տրամադրել բավարար ժամանակ՝ գնահատվող առաջադրանքը կատարելու համար.

11.2.10. հստակեցնել յուրաքանչյուր առաջադրանքի կամ վերջինիս համար պահանջվող խնդիրները՝ տեղեկացնելով գնահատման համապատասխան չափանիշների մասին.

11.2.11. գնահատել սովորողների ներկայացրած բոլոր աշխատանքները և դրանք ժամանակին վերադարձնել նրանց:

11.3. Ուսանող

Ուսանողները պարտավոր են՝

11.3.1. կարևորել գնահատումը որպես ուսումնառության անբաժանելի մաս.
11.3.2. հանձնել ցանկացած պահանջվող աշխատանք՝ յուրացման առաջադրանքներ, դասարանական աշխատանքներ, նախագծեր և այլն ՝ պահպանելով նշված ժամկետները.
11.3.3. ապահովել ներկայացված աշխատանքների նպատակահարմարությունը և համապատասխան ձևավորումը.
11.3.4. մասնակցել գնահատման պլանավորման գործընթացին.
11.3.5. մասնակցել գնահատման քաղաքականության վերանայման գործընթացին:

11.4. Ծնող

Ծնողները պարտավոր են՝

11.4.1. ծանոթանալ գնահատման նպատակներին, սկզբունքներին, ձևերին և տեսակներին.
11.4.2. ընդունել գնահատման քաղաքականության փաստաթղթի պայմանները.
11.4.3. աջակցել ուսանողներին գնահատման հմտությունները զարգացնելու հարցում՝ բարենպաստ միջավայր ապահովելով.
11.4.4. տեղեկանալ ուսանողի ընթացիկ գնահատականներին e-Buh ծրագրի միջոցով.
11.4.5. մասնակցել գնահատման քաղաքականության վերանայման գործընթացին:

12. Հղումներ

Ակադեմիական ազնվություն, IBO, 2019:թ

Գնահատման ընթացակարգեր, IBO, 2020:

Դիպլոմային ծրագրի գնահատում. Սկզբունքներ և պրակտիկա, IBO, 2009:

Դիպլոմային ծրագիր. Սկզբունքներից դեպի պրակտիկա, IBO, 2015:

Ընդհանուր կանոնակարգ. Դիպլոմային ծրագիր, IBO, 2016:

Դիպլոմային ծրագրում դպրոցի գնահատման քաղաքականության մշակման ուղեցույցներ

« ԱԴ գնահատման քաղաքականություն», 2020-21 ուստարի:

13. Հավելվածներ

Հավելված ***1:*** Ավագ դպրոցի առարկաների համար առաջարկվում են առարկայական հետևյալ չափանիշները.

1. Լեզու և գրականություն

   Ա. Վերլուծում
   Բ Մտքի համակարգում
   Գ Խոսքի կամ տեքստի ստեղծում
   Դ Լեզվի և ոճի կիրառում
2. Օտար լեզու

   Ա. Բանավոր ճկարագրական խոսքի ընկալում
   Բ. Գրավոր ճկարագրական խոսքի ընկալում
   Գ Հաղորդակցում՝ գրավոր, բանավոր և տեսողական, լսողական տեքստերի հիման վրա
   Դ Բանավոր և գրավոր խոսքի կիրառում
3. Գիտություն

   Ա. Գիտելիք և ընկալում
   Բ. Հարցադրում և նախագծում
   Գ. Գործընթաց և զարգացում
   Դ. Անդրադարձ գիտությանը
4. Անհատ և հասարակություն

   Ա. Գիտելիք և ընկալում
   Բ. Հետազոտում
   Գ.Հաղորդակցում
   Դ.Քննադատական մտածողության դրսևորում
5. Մաթեմատիկա

   Ա.Գիտելիք և ընկալում
   Բ. Օրինաչափությունների դրսևորում
   Գ.Հաղորդակցում
   Դ. Մաթեմատիկական գիտելիքների կիրառումը կյանքում
6. Արվեստ

   Ա. Գիտելիք և ընկալում
   Բ.Կարողությունների զարգացում
   Գ. Ստեղծագործական մտածողության դրսևորում
   Դ. Արձագանքում

7. Ֆիզիկական կրթություն և առողջ ապրելակերպ

Ա. Գիտելիք և ընկալում
Բ. Նեկայացման պլանավորում
Գ. Կիրառում և ներկ այացում
Դ.Ներկայացման կատարելագործում ըստ անդրադարձի

8. Ինֆորմատիկա

Ա. Հետազոտում և վերլուծում
Բ. Գաղափարների մշակում
Գ. Նախագծերի ստեղծում
Դ. Ջարգացում և գնահատում

9. Նախագծեր

Ա Հետազոտում
Բ. Պլանավորում
Գ. Գործողությունների ձեռնարկում
Դ. Անդրադարձ

10. Միջառարկայական կապ

Ա. Առարկայական հիմքերի որոնում
Բ. Համադրում
Գ. Հաղորդակցում
Դ. Անդրադարձ

Առաջարկվող չափանիշները կարող են համալրվել կամ նրանցից ընտրվել մեկը /մի քանիսը՝ ըստ անհարժեշտության՝ նախապես համաձայնեցնելով ամբիոնի ղեկավարի հետ:

Հավելված 2: Թվանշանային միավորների համակարգը

Միավոր	(%)	Բնութագրիչ
10	95-100	Բացառիկ առաջադիմություն
9	85-94	Գերազանց առաջադիմություն

8	75-84	Շատ լավ առաջադիմություն
7	65-74	Լավ առաջադիմություն
6	55-64	Բավարար առաջադիմություն
5	45-54	Բավարար ցածր առաջադիմություն
4	40-44	Վատ առաջադիմություն
3	25-39	Շատ ցածր առաջադիմություն
1-2	0-24	Ծայրահեղ ցածր առաջադիմություն

Հավելված **3.**

ՄԲԴԾ և ԱԴ հեղինակային ծրագրերում սովորողների գնահատման սանդղակ

Գնահատման սանդղակ						
ՄԲԴԾ	%	հեղինակային ծրագիր		ՄԲԴԾ	%	հեղինակային ծրագիր
7	99	10		3	49	6

	97				47	
	94				43	
	92				41	5
	89				38	
	88				36	
6	87	9			34	
	84				33	
	82			2	32	4
	78				30	
	77				28	
	75	8			26	
5	74				24	
	72				22	
	69				20	3

	66				18	
	64	7		1	16	
	62				14	
4	59				12	
	57				10	2
	55				8	
	54	6			6	
	52				4	
	51				2	1
	50				0	

Հավելված **4.** Ռեյտինգների հաշվարկման կարգ

Ճեմարանի ուսանողի ընդհանուր առաջադիմության չափանիշը նրա բացարձակ ռեյտինգն է՝ նախորդ ուստարվա կամ կիսամյակի գնահատման արդյունքներով:

Բացարձակ ռեյտինգը (R) հաշվարկվում է բոլոր առարկաների գնահատականների և ընթացիկ աշխատանքների հիման վրա՝ հաշվի առնելով այդ առարկաների շաբաթական ժամաքանակը (տե՛ս ուսումնական պլան):

Հարաբերական ռեյտինգը հաշվարկվում է վերահանձնումներից դրական գնահատականներ ստացած սովորողների խմբի (դասարանի) տարեկան կամ կիսամյակային գնահատականների միջոցով:

R-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$R=\frac{\sum_{i=1}^{n} G_i Ti}{T}\cdot 100\%$$

Ցուրաքանչյուր առարկայի շաբաթական ծանրաբեռնածության և հաշվարկային գնահատականի արտադրյալների գումարը բաժանել շաբաթական ընդհանուր ծանրաբեռնվածության վրա և արտահայտել տոկոսներով:

Gi- հաշվարկային գնահատական, որի հաշվարկը իրականացվում է՝ հիմք ընդունելով կիսամյակային առաջադիմությունը և աշխատանքների կատարման մակարդակը,

A- Կիսամակային ամփոփիչ միջին գնահատական

K- Կիսամյակային ձևավորող միջին գնահատական

Ti- առարկայի շաբաթական ծանրաբեռնվածություն

T- շաբաթական ընդհանուր ծանրաբեռնվածություն

∑- դասավանդվող առարկայի շաբաթական ծանրաբեռնածության և հաշվարկային գնահատականի արտադրյալների գումար:Հաշվարկային գնահատականի 70%-ը կազմում է տվյալ առարկայի ամփոփիչ աշխատանքների միջին գնահատականը, իսկ 30%-ը՝ ձևավորող աշխատանքների միջին գնատականը:

Հավելված 5: Գնահատման ստանդարտացման ձևանմուշ

Առարկայական խումբ, առարկա_____
Գնահատում/ _____
Առաջադրանքի ձև _____
Ամսաթիվ_____

ուսանող	Ուսուցիչներ	Նախնական գնահատա կան	Վերջնական գնահատա կան	Մեկնաբանություններ

Ուսուցիչ_____Ստորագրություն_____

Ուսուցիչ_____Ստորագրություն _____

Ուսուցիչ_____ __Ստորագրություն _____

Հավելված **6.** Միջին որակական գնահատականի հաշվարկում

ՀՀ	Առարկա	Խորացված	Հենքային
1	Հայոց լեզու և գրականություն	**1.2**	**1.1**
2	Ռուսաց լեզու և գրականություն	**1.2**	**1.1**
3	Օտար լեզու	**1.2**	**1.1**
4	Հանրահաշիվ	**1.2**	**1.1**
5	Երկրաչափություն	**1.2**	**1.1**
6	Ֆիզիկա	**1.2**	**1.1**
7	Քիմիա	**1.2**	**1.1**
8	Կենսաբանություն	**1.2**	**1.1**

9	Ինֆորմատիկա	**1.2**	**1.1**
10	Գծագրություն	**1.2**	**1.1**
11	Պատմություն	**1.1**	**1.1**
12	Հասարակագիտություն	**1.1**	**1.1**
13	Աշխարհագրություն	**1.1**	**1.1**

Կրթական ծրագրերի զարգ. փոխտնօրեն՝ Գագիկ Թոռչյան
Ուսումնամեթոդական գծով փոխտնօրեն՝ Աննա Ստեփանյան
Ուսումնատեսչական աշխատանքների համակարգող՝ Աննա Սարգսյան
Հոգեբանական կենտրոնի ղեկավար՝ Անի Հարությունյան
Ավագ դպրոցի հեղինակային ծրագրի համակարգող՝ Արուսյակ Արզումանյան
Ֆինանսատնտեսագիտական հարցերով փոխտնօրեն՝ Թագուհի Սինանյան